1000 խոշոր հարկատուների կողմից 2021թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2021թ. հունվար-հունիս ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 584.4 մլրդ դրամ, ինչը 9.3%-ով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից (գծապատկեր 1): Հարկ է նկատել, որ 1000 հարկատուների ցանկում 2021-ին ներառվել են ոչ միայն տնտեսվարող սուբյեկտները, այլ նաև պետական կառավարչական հիմնարկները, այդ թվում՝ նախարարությունները, այլ գերատեսչություններ: Նույն կերպ կազմված է նաև 2020-ի երկրորդ եռամսյակի ցանկը, ուստի համադրելիությունն ապահովելու նպատակով 2020-ին նախորդող տարիների համապատասխան ժամանակահատվածը չի դիտարկվել:



Գծապատկեր 1. Հունվար-հունիս ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2021թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, որոշ փոփոխություններ է կրել 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը: Այսպես, 2021-ի հունվար-հունիս ժամանակահատվածում 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 148 մլրդ դրամ հարկ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 3 մլրդ դրամով կամ մոտ 2%-ով (գծապատկեր 2): Մյուս կողմից, 100 խոշոր հարկատուները, 2020թ. համեմատ, վճարել են 12 մլրդ դրամով ավելի հարկ:



Գծապատկեր 2. Հունվար-հունիս ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Որոշակի ավելացում է արձանագրել 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի մեծությունը: Այսպես, ցանկի վերջին հարյուրակում գտնվող հարկատուների վճարումները 2021թ. հունվար-հունիս ամիսներին կազմել է 10,3 մլրդ դրամ՝ 2020-ի 9 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2021թ. առաջին կիսամյակի համար կազմել է 33 անգամ, նախորդ տարի՝ 37 անգամ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի հարաբերակցությունը 2021-ին 151 անգամ է, ինչը ևս ավելի փոքր է, քան նախորդ տարում գրանցված հարաբերակցությունը (գծապատկեր 4): **Սա վկայում է 1000 հարկատուների ցանկում ստորին հորիզոնականներ գբաղեցնող ընկերությունների տնտեսական ակտիվության առաջանցիկ վերականգնման մասին:**



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

2021թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով ՀՀ-ում գործող 110 ընկերություն և կազմակերպություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2020-ին այդպիսի հարկատուների թիվը 94 էր: Նույն կերպ, 2021-ի հունվար-հունիս ամիսների արդյունքներով, 217 ընկերության և կազմակերպության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի հարկատուների թիվը 179 էր:



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով, խոշոր հարկատուների ցանկում ներառված ընդամենը 22 սուբյեկտի պարագայում է, որ վճարած հարկերի ընդհանուր մեծությունը չի գերազանցում 100 մլն դրամը, մինչդեռ 2020-ի նույն ժամանակահատվածում ցանկում ներառվել էր 144 այդպիսի հարկատու (գծ. 5): **Ավելին, 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառվելու համար 2021թ. առաջին կիսամյակում պետք էր վճարել առնվազն 98 մլն դրամի հարկ, 2020-ին՝ 82 մլն դրամից մի փոքր ավելի:**

2021-ի հունվար-հունիս ամիսների արդյունքներով, ՀՀ-ում 181 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 158 էր: Նույն կերպ, 262 հարկատուի վճարած եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, նախորդ տարվա համեմատությամբ այսպիսի հարկատուների թվաքանակը ավելացել է 22-ով (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի նվազումը: **2021թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 38,9%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը 40.4% էր (գծապատկեր 7):**

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 37.9%-ը ուղղակի հարկերն են գրեթե նույնքան, ինչ 2020-ին:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2021թ. առաջին վեց ամիսների արդյունքներով, 79 հարկատուի ուղղակի հարկի վճարումները գերազանցել են 500 մլն դրամը: Նախորդ տարի այդպիսի կազմակերպությունների թիվը 74 էր:

2021թ. հաշվետու ժամանակահատվածում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել մոտ 413 կազմակերպություններ, 2020-ին հանրապետությունում գործել է 383 այդպիսի կազմակերպություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2021թ. հունվար-հունիս ժամանակահատվածում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակիորեն տարբերվում է նախորդ տարիների պատկերից:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021-ի առաջին կիսամսյակում վճարել է 3,39 մլրդ դրամի հարկ (2020-ին՝ 3,27 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 501 մլն դրամ (2020-ին՝ 493 մլն դրամ), եկամտային հարկը՝ 785 մլն դրամ (2020-ին՝ 742 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,28 մլրդ դրամ (2020-ին՝ 1,19 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 285 մլն դրամ (2020-ին՝ 415 մլն դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021թ. առաջին վեց ամիսների արդյունքներով վճարել է 103 մլն դրամի հարկ (2020-ին՝ 88 մլն դրամ), շահութահարկը՝ 15 մլն դրամ (2020-ին՝ 12 մլն դրամ), եկամտային հարկը՝ 25 մլն դրամ (2020-ին՝ 26 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 46 մլն դրամ (2020-ին՝ 40 մլն դրամ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք կազմակերպությունների կողմից հունվար-հունիս ամիսներին պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2020-2021թթ. ընթացքում: Ընտրված թվով 74 կազմակերպությունների 2/3-ից ավելին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը: Այստեղ կարելի է նշել հանքահումքային և հեռահաղորդակցության ոլորտների առաջատարներին, նաև բնական մենաշնորհ հանդիսացող կազմակերպություններին:

Դիտարկվող ժամանակահատվածում ամենամեծ անկումը Գրանդ Տոբակո ընկերությանն է՝ 13,4 մլրդ դրամ, զգալի անկում են գրանցել նաև՝ «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»-ը՝ 3,6 մլրդ դրամ, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»-ը՝ 3 մլրդ դրամ, «ՖԼԵՇ»-ը՝ 1,6 մլրդ դրամ, «ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»-ն՝ 1,5 մլրդ դրամ: Նվազում գրանցած մյուս կազմակերպությունների պարագայում դրա չափը պակաս շոշափելի է:

Աճի առումով առաջատարներ ընկերությունների թվում են «Թեղուտ»-ը՝ 5,9 մլրդ դրամ, «Լիդիան Արմենիա»-ն՝ 3,9 մլրդ դրամ, Զանգեզուրի ՊՄԿ-ն՝ 3,6 մլրդ դրամ, Ամերիաբանկը՝ 2,6 մլրդ դրամ, «Մաքս օիլ»-ը՝ 2,6 մլրդ դրամ, «Գազպրոմ Արմենիա»-ն՝ 2,5 մլրդ դրամ:

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2020	2021	Տարբերությունը
1	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	25.9	28.4	2.5
2	«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	23.2	26.8	3.6
3	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»	16.5	25.4	8.9
4	«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	26.3	12.9	-13.4
5	«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	16	12.4	-3.6
6	«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»	9	10.2	1.2
7	«ԹԵՂՈՒՏ»	3.9	9.8	5.9
8	«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	6.7	8.9	2.2
9	«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	9.8	6.8	-3.0
10	«ՖԼԵՇ»	7.9	6.3	-1.6
11	«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	7.5	6.0	-1.5
12	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	3.1	5.7	2.6
13	«ՅՈՒՔՈՄ»	4	5.6	1.6
14	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	6.9	4.9	-2.0
15	«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ»	0.2	4.1	3.9
16	«ՉԱԱՐԱՏ ԿԱՊԱՆ»	2.3	4.1	1.8
17	«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»	2.8	4.1	1.3
19	«ՍԻԹԻ»	4.4	3.8	-0.6
20	«ՄԱՔՍ ՕԻԼ»	0.96	3.5	2.6
21	ԻՆԵԿՈԲԱՆԿ	1.7	3.4	1.7
22	«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»	0.8	3.3	2.5
23	«ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ»	2.4	3.2	0.8
24	«ԲԱՂՐԱՄՅԱՆ»	2.4	3.0	0.6
25	ԱԿԲԱ ԲԱՆԿ	2.7	3.0	0.3
26	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	3.3	3.0	-0.3
27	«ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ»	2.3	2.9	0.6
28	«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	4.6	2.9	-1.7
29	«ԱՎԵՐՍ»	2.1	2.5	0.4
30	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	2.3	2.5	0.2
31	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ	1.5	2.4	0.9
32	«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»	2.3	2.4	0.1
33	«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ»	1.1	2.4	1.3
34	«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	2.2	2.4	0.2
35	ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	2.45	2.3	-0.1
36	«ԱՍԿԵ ԳՐՈՒՊ»	0.9	2.3	1.4
37	«ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ»	2.7	2.3	-0.4
38	«ԴԵԿՈՐԱ-ԳՐՈՒՊ»	1.8	2.3	0.5
39	«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	8.9	2.2	-6.7
42	«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	2.5	2.1	-0.4

Տեղը ցանկում	Կազմակերպության անվանումը	2020	2021	Տարբերությունը
43	«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	2.1	2.1	0.0
44	«ԳՈԼԴ ՊԵՏՐՈԼ»	0	2.1	2.1
45	«ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	1.8	2.1	0.3
46	«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ»	1.5	2.0	0.5
47	«ՄՈԴՈՒՍ ԳՐԱՆՈՒՄ»	2	2.0	0.0
48	«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	1.5	2.0	0.5
49	ՎԱԳԱ-ՖԱՐՄ	1.6	2.0	0.4
50	«ՍԱՍ-ԳՐՈՒՊ»	1.76	1.9	0.2
51	ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	2.2	1.9	-0.3
52	«ԲԱՐՍԻՍ»	2	1.9	-0.1
53	«ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ»	1.8	1.9	0.1
54	«ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	1.1	1.9	0.8
55	ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	2.2	1.9	-0.3
57	«ԱԹԵՆՔ»	1.2	1.8	0.6
58	«ԹԵԼ-ՍԵԼ»	1.26	1.8	0.5
59	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	1.3	1.8	0.5
60	«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	2.46	1.8	-0.7
61	«ՑԵՊԵԼԻՆ ԱՐՄԵՆԻԱ»	1.2	1.7	0.5
62	«ԼԻՄՈՆ ԳՐՈՒՊ»	0.2	1.6	1.4
64	«ԴԻՍԹՐԻՄԷՔՍ»	2	1.6	-0.4
65	«ԱՈԳԵ ԲԻԶՆԵՍ»	1.35	1.6	0.2
66	«ԴԻԶԻԹԵՅՆ»	1	1.6	0.6
68	«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ»	1	1.6	0.6
70	«ԴԵՐԺԱՎԱ-Ս»	1.3	1.5	0.2
73	«ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵԶՈՒՐ»	1.1	1.5	0.4
77	«ԱՐՊԱՆԻՎ»	1	1.4	0.4
82	«ՊԻԿՍԱՐՏ»	0.77	1.3	0.5
87	«ԷՍ ԸՆԴ ԷՅ ՄԱՅՆԻՆԳ»	0.86	1.2	0.4
88	«ՌԵՆԿՈ ԱՐՄԷՍՏԵՅՏ»	1.15	1.2	0.1
92	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	1	1.1	0.1
94	ՅՈՒՆԻԲԱՆԿ	1.6	1.1	-0.5
96	ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ	1	1.1	0.1
97	«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	1.1	1.1	0.0
98	«ԱԴԱՄԻՈՒՄ»	1.4	1.1	-0.3
100	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ	1.97	1.1	-0.9

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2021թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով որոշակի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 584 մլրդ դրամ, ինչը 9,3%-ով կամ մոտ 50 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից,
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է 339,2 մլրդ դրամի հարկ, որը 12 մլրդ դրամով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2021-ի առաջին վեց ամիսներին վճարել են 10,3 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատությամբ՝ 21%-ով ավելի,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի որոշակի նվազում է արձանագրվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2021թ. հունվար-հունիսին կազմել է 151 անգամ, նախորդ տարվա 182 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը 2021-ին կազմել է 33, ինչը ևս ցածր է նախորդ տարիների մակարդակից,
- ✓ 2021թ. կիսամսյակի արդյունքներով՝
  - ՀՀ-ում գործել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 110 սուբյեկտ, նախորդ տարում՝ 94,
  - 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների և գերատեսչությունների թիվը 217 է (2020-ին՝ 179),
  - 1000 խոշոր հարկատուների ցանկում կան 100 մլն դրամից պակաս հարկ վճարած 22 ընկերություններ (2020-ին այդպիսիք 144-ն էին),
  - 181 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը (2020-ին կար 158 այդպիսի ընկերություն):
  - 262 հարկատու գերազանցել է եկամտային հարկի՝ 100 մլն դրամի շեմը (2020-ին՝ 240),

- ուղղակի հարկերի տեսակարար կշիռը 1000 հարկատուների ցանկում ներառված սուբյեկտների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի կառուցվածքում կազմել է 38,9% (2020-ին՝40,4%),
- 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 413 ընկերություններ (2020-ին՝ 383):

✓ Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021-ի առաջին կիսամսյակում վճարել է 3,39 մլրդ դրամի հարկ (2020-ին՝ 3,27 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 501 մլն դրամ (2020-ին՝ 493 մլն դրամ), եկամտային հարկը՝ 785 մլն դրամ (2020-ին՝ 742 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1,28 մլրդ դրամ (2020-ին՝ 1,19 մլրդ դրամ), ակցիզային հարկը՝ 285 մլն դրամ (2020-ին՝ 415 մլն դրամ):

✓ Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2021թ. առաջին վեց ամիսների արդյունքներով վճարել է 103 մլն դրամի հարկ (2020-ին՝ 88 մլն դրամ), շահութահարկը՝ 15 մլն դրամ (2020-ին՝ 12 մլն դրամ), եկամտային հարկը՝ 25 մլն դրամ (2020-ին՝ 26 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 46 մլն դրամ (2020-ին՝ 40 մլն դրամ):

✓ Խոշոր հարկատուների ցանկում վերին հորիզոնականներ զբաղեցրած կազմակերպություններից հանրային առավել հետաքրքրություն ներկայացնող 74 հարկատուների 2/3-ից ավելին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ որոշակիորեն ավելացրել են վճարված հարկերի մեծությունը:

✓ Դիտարկվող ժամանակահատվածում ամենամեծ անկումը Գրանդ Տոբակո ընկերությանն է՝ 13,4 մլրդ դրամ, զգալի անկում են գրանցել նաև՝ «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»-ը՝ 3,6 մլրդ դրամ, «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»-ը՝ 3 մլրդ դրամ, «ՖԼԵԾ»-ը՝ 1,6 մլրդ դրամ, «ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»-ն՝ 1,5 մլրդ դրամ: Նվազում գրանցած մյուս կազմակերպությունների պարագայում դրա չափը պակաս շոշափելի է:

✓ Աճի առումով առաջատարներ ընկերությունների թվում են «Թեղուտ»-ը՝ 5,9 մլրդ դրամ, «Լիդիան Արմենիա»-ն՝ 3,9 մլրդ դրամ, Զանգեզուրի ՊՄԿ-ն՝ 3,6 մլրդ դրամ, Ամերիաբանկը՝ 2,6 մլրդ դրամ, «Մաքս օիլ»-ը՝ 2,6 մլրդ դրամ, «Գազպրոմ Արմենիա»-ն՝ 2,5 մլրդ դրամ: